ԻՐՏԵԿ Մինչև Հայաստանի Հանրապետության սահմանադրության ընդունումը՝ 13.07.1995 թվականը, դադարեցվում է սույն սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին:
Սույն սահմանադրության գործողությունը ամբողջությամբ դադարել է 13.07.1995 թվականից՝ 05.07.95 Սահմանադրություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ)

(Ընդունված է Հայաստանի Հանրապետության իններորդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ յոթերորդ նստաշրջանում 1978 թվականի ապրիլի 14-ին)

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որ կատարեցին Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները՝ Վ. Ի. Լենինի գլխավորած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հայ ժողովրդի համար, ինչպես և երկրի մյուս ժողովուրդների համար, նշանավորեց պատմական շրջադարձ, որից սկսվեց նրա նոր պատմությունը՝ սոցիալական և ազգային վերածնունդը, նրա սոցիալիստական պետականության հաստատումը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և խորհուրդների իշխանության հաստատման շնորհիվ մեր երկրի աշխատավորները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, իրականացրին արմատական սոցիալ-տնտեսական վերափոխումներ, պաշտպանեցին սոցիալիզմի նվաճումները և կառուցեցին զարգացած սոցիալիստական հասարակարգ՝ աշխատանքի մարդկանց իսկական ազատության հասարակարգ, որում ստեղծված են հզոր արտադրողական ուժեր, անշեղորեն բարձրանում է ժողովրդի բարեկեցությունը և կուլտուրան, ամրապնդվում է բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և ժողովրդական մտավորականության անխորտակելի դաշինքը:

Հայաստանի Հանրապետությունը իրավահավասար հանրապետություն է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմում, որը մարմնավորում է խորհրդային ժողովրդի պետական միասնությունը, համախմբում է բոլոր ազգերին և ազգություններին համատեղ կոմունիզմ կառուցելու համար:

Ղեկավարվելով կոմունիզմի վեհ իդեալներով և համապատասխան ԽՍՀ Միության

Հոդված 72. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայոց լեզուն է: